# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**
**Հաշվետվություն թիվ 162, 11.07.2017թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Կարեն Սարգսյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Բագրատ Ճզմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 11.07.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

11 հուլիսի 2017թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 25/02Լ-Հ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ 0102- N 25/02L - Հ
Դաս: ՀՊ
«06» հուլիսի 2017թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, Հոդված 75-ը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^6$-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (ԱՄՆ դոլար) թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալ սահմանել ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ը:

2. ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի համար սահմանել 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

3. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Բանկի Խորհրդի առանձին որոշումներով:

5. Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ

սահմանափակում չսահմանել՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

6. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը $18^{00}$-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:

7. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը $18^{00}$-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:

8. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրենին պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ներկայացնել ՀՀ կենտրոնական Բանկ գրանցման:

9. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի հունիսի 03-ի թիվ 11/01Լ-Հ որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:

10. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից չեղյալ ճանաչել Բանկի խորհրդի 2017 թվականի ապրիլի 25-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» N07/08Լ որոշումը:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար Մ.Ուզունյան